

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
УЧЕНЫЕ ЗАПИСКИ АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ПЕДАГОГИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА ИМ. Х. АБОВЯНА

Հումանիտար գիտություններ №4 (33) 2017 Гуманитарные науки

81' 36

ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ
ԻՐԱԴՐԱՅԻՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
Ս.Խ. ԲԱՂՂԱՍԱՐՅԱՆ

*Խ. Արքովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան,
0010, Երևան, Տիգրան Մեծի 17
e-mail: susanna.baghdasaryan@gmail.com*

Հոդվածում քննարկվում է օտար լեզվի (անգլերեն) տիրապետման տարբեր մակարդակներում քերականական նվազագույնին առաջադրվող պահանջների, քերականության ուսուցման նպատակների առաջնահերթությունների փոփոխման հարցը: Կոմպետենտային մոտեցման շրջանակներում այն դիտարկվում է լեզվաբանական, սոցիալ-մշակութային, հաղորդակցական, գործաբանական, լեզվամշակութային, մեթոդական, մեթոդական և, իհարկե, քերականական կոմպետենցիաների տեսանկյունից: Հետաքրքիր է այդ հիմնախնդրի դիտարկումը ռեգիստր վերլուծության տեսանկյունից: Իրադրային քերականության ուսուցման համատեքստում քերականական նվազագույնի ընտրության սկզբունքները անհրաժեշտ է դիտարկել գործառական քերականության տեսանկյունից, որտեղ առաջին պլան է մղվում գործառությանության զաղափարը:

Բանալի բառեր. իրադրային քերականություն, գործառական քերականություն, գործառությանություն, գործաբանական, քերականական նվազագույն, կոմպետենտային մոտեցում, հաղորդակցական, քերականական կոմպետենցիա, մեթոդական, ռեգիստր վերլուծություն:

Ներկայացված է խմբագրություն 3.07.2017թ.

Օտարալեզու քերականության նվազագույնի ընտրության սկզբունքները դասակարգելիս մեթոդաբանները հաշվի են առնում տարբեր գործոններ՝ ուսուցման պայմանները, ուղղվածությունը, ուսանողների լեզվական մակարդակը, պահանջմունքների բովանդակային բնութագրերը, ինչպես նաև այն, թե ինչ ծրագրի շրջանակներում է ներմուծվում օտարալեզու լեզվանյութը, ինչպես է այն ամրապնդվում կամ վերաբարդվում:

Առաջնային սկզբունք է հաշվի առնել այն, թե ինչպես, ինչ պայմաններում են արդյունավետորեն գործում քերականության յուրացման մեխանիզմները: Ընդ որում, քերականության յուրացման մեխանիզմները դիտարկվում են ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական, գործաբանական, ճանաչողական և այլ մակարդակներում:

Որոշ հետազոտողներ դիտարկում են քերականական նվազագույնի ընտրության սկզբունքները լեզվական հատկությունների զարգացման տեսանկյունից՝ քննության առնելով դրանք ընկալողական և արտադրողական մակարդակներում [1;2;5]:

«Քերականական նվազագույն» հասկացության հիմնական սահմանումների պատմահամեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ այն դիտարկվում է հնչյունական նյութի, ունկնդրողական կոմպետենցիայի, բանավոր կամ գրավոր խոսքի յուրացման, զարգացման տեսանկյուններից:

Կոմպետենտային մոտեցման շրջանակներում նոր բովանդակային և գործառական բնութագրեր է ձեռք բերում օտարալեզու քերականության նվազագույնի ընտրության հիմնախնդիրը: Այն դիտարկվում է լեզվական, լեզվաբանական, սոցիալ-մշակութային, հաղորդակցական, գործաբանական, լեզվամշակութային, մեթալեզվաբանական, մեթոդական, ռազմավարական և, իհարկե, քերականական կոմպետենցիաների տեսանկյունից:

Քերականության նվազագույնի ընտրությունը նոր բովանդակային բնութագրեր է ձեռք բերում նաև ռեգիստր վերլուծության տեսանկյունից: Կարևորվում են հատկապես Ռ. Ս. Էգգինսի /Eggins S. 1994, Շ. Լեկի Տարրի /Leckie-Tarry H. 1993/, Ջ. Մարքոյի /J. Marco 2001/ աշխատանքները [9;10;11]:

Լեզվաբանության շրջանակներում ռեգիստրը լեզվի տարատեսակ է, որը գործածվում է հատուկ նպատակով կամ հատուկ սոցիալական պայմաններում: Օրինակ՝ հակադրվում են հաղորդակցման պաշտոնական և ոչ պաշտոնական պայմանները: Զուգահեռաբար կիրառվում են "register", "field" or "tenor" եզրույթները: Լրացուցիչ առանձնանում են diatype, genre, text types, style, acrolect, mesolect և basilect եզրույթները [8]:

Օտար լեզուների ուսուցման շրջանակներում ռեգիստրը վերաբերում է պաշտոնական և ոչ պաշտոնական ոճերին: Եվ եթե ոճը դիտարկվում է որպես լեզվի տարաբնույթ դրսևորում, որը դիտարկվում է պաշտոնական լեզվի ոճի տեսանկյունից, ապա ռեգիստրը վերաբերում է ավելի շատ ուսումնական ծածկալեզվին [12]:

Իրադրային քերականության ուսուցման տեսանկյունից առանձնանում է Ջ. Մարտինի մոտեցումը, որը խոսակցական անգլերենի հինգ ոճ է առանձնացնում [13]:

- Սառը ոճ կամ ստատիկ ռեգիստր՝ վերաբերում է տպագրված անփոփոխ լեզվին: Օրինակ՝ աստվածաշնչյան մեջբերումները՝ The Pledge of Allegiance – **հավատարմության երդում ամերիկյան դրոշմին:**

- Պաշտոնական՝ միակողմանի մասնակցություն և ոչ մի ընդհատում, տեխնիկական բառապաշարը կամ ճշգրիտ սահմանումները կարևոր են և ներառում են ներկայացումներ կամ ծանուցումներ անձանորթների միջև:

- Խորհրդատվական՝ երկկողմանի մասնակցություն, երբ առկա է հենքային տեղեկատվությունը: Նախնական գիտելիքի առկայություն չի ենթադրվում: Կիրառվում է պատասխանելիս՝ «uh huh», «I see», այսպես կոչված backchannel-ները: Ընդհատումները թուլատրվում են:

- Ոչ կամածին՝ ընկերական շրջանում, ծանոթությունների ժամանակ: Հենքային տեղեկատվությունը բացակայում է: Բնորոշ են կրկնությունները, լրացնողները (filler) և ծածկալեզուն:

- Ներանձնական՝ ոչ հրապարակային, որտեղ շեշտադրումն ավելի կարևոր է, քան բառապաշարը կամ քերականությունը: Այն ներառում է ոչ խոսքային հաղորդագրություններ: Բնորոշ է ընտանիքի անդամների և մոտ ընկերների հաղորդակցությանը:

Ընդհանուր առմամբ առանձնացնում են հետևյալ ռեգիստրները՝

- bench-level register – սահմանային ռեգիստր
- dialect register- բարբառային ռեգիստր

- facetious register- հումորային ռեգիստր
- formal register- պաշտոնական ռեգիստր
- in house register – հասարակաբանական ռեգիստր
- ironic register- երգիծական ռեգիստր
- neutral register- չեզոք ռեգիստր
- slang register- ժարգոնային ռեգիստր
- taboo register- տաբու ռեգիստր
- technical register-տեխնիկական ռեգիստր:

Այսպիսով, ռեգիստրը յուրահատուկ ենթատեքստ, ենթալեզու կամ գիտելիքի (հոգեբանական, հոգեվերլուծական, մանկավարժական, գիտական) ոլորտ է ներկայացնում: Ըստ Պոլյակովի քերականական նվագագույնը ռեգիստր վերլուծությամբ դժվար է որոշել [6]:

Իրադրային քերականության ուսուցման համատեքստում քերականական նվագագույնի ընտրության սկզբունքները անհրաժեշտ է դիտարկել նոր մեթոդաբանական դիրքերից: Այդ հարցում առանձնակի նշանակություն ունի մանկավարժական քերականությունը, քանի որ սույն հիմնախնդիրը չի դիտարկվում միայն լեզվաբանական հարթության վրա, և գիտնականները հաշվի են առնում սովորողների հոգեբանական, տարիքային, ազգամշակութային, սոցիալական առանձնահատկությունները: Հիմնախնդիրը նոր հնչեղություն է ստանում գործառական քերականության տեսանկյունից: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ որոշ իրական խոսքային իրադրություններում քերականական կառույցները կատարում են հստակ գործառույթներ և դրանց նշանակությունը դժվար է ներկայացնել ավանդական քերականությամբ: Գործառական լեզվաբանության հաջողություններից մեկն այն է, որ Եվրոպայի խորհրդի լեզվաքաղաքականության շրջանակներում առաջարկվում է լեզուն ուսումնասիրել տարբեր՝ նախաշեմային /Waystage/, շեմային /Threshold level/ և հետշեմային /Vantage/ մակարդակներում [3; 7]: Ակնհայտ է, որ լեզվի տիրապետման տարբեր մակարդակներում քերականական նվագագույնին առաջադրվող պահանջները փոխվում են, փոխվում են քերականության ուսուցման նպատակների առաջնահերթությունները՝ առաջին պլան մղելով գործառությայնության գաղափարը, ուսանողների իրական խոսքային գործունեության կարողությունների զարգացումը:

Իրադրային կամ խոսակցական քերականական նվագագույնն ընտրելիս անհրաժեշտ է վերանայել ավանդական սկզբունքների դասակարգման և ընտրության կարգը: Ընդ որում՝ իրադրային քերականության ուսուցումը ենթադրում է քերականության ուսուցման հիերարխիկ համակարգ, ըստ որի՝ առաջնային են համարվում հաղորդակցական սկզբունքները, իսկ ավանդական համարվող սկզբունքները կարող են կիրառվել ըստ տվյալ ուսումնախոսքային իրադրության:

Իրադրային քերականության ուսուցման համատեքստում անհրաժեշտություն է առաջանում ընտրել այնպիսի քերականական նվագագույն, որը թույլ կտա օբյեկտիվորեն գնահատել ուսանողների գիտելիքները կամ թեստավորել նրանց: Ընդ որում, արդի փուլում թեստավորումն իրականացվում է կոմպետենտային մոտեցման տեսանկյունից: Ակնհայտ է որ քերականական կոմպետենցիան ամբողջական է դառնում, եթե հաշվի ենք առնում լեզվական, լեզվաբանական, խոսութային, գործաբանական և այլ կոմպետենցիաները: Վերջնարդյունքում քերականական կոմպետենցիայի թեստավորումը հիմք է ստեղծում ուսանողների հաղորդակցական կոմպետենցիայի գնահատման համար: Փաստորեն, վերանայվում են քերականական նվագագույնի ընտրության սկզբունքները տարբեր տեսանկյուններից՝ քերականական նյութի ներմուծման, ամրապնդման, ներկայացման, ստուգման, գնահատման, թեստավորման և այլն:

Կարևորվում է հաղորդակցական մոտեցումը, քանի որ ըստ այդ մոտեցման՝ սկզբունքների օտարալեզու քերականական նվազագույնը ընտրվում է ըստ լեզվի գործառական համակարգի առանձնահատկությունների, իրական խոսքային իրադրությունների, տվյալ իրադրությունը ներկայացնող ենթատեքստի, հաղորդակցական մտադրությունների և հաղորդակցության մասնակիցների դերակատարությունների: Ըստ այդմ, կարևորվում են ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական մակարդակները: Համապատասխանաբար, սովորողները պետք է իմանան թիրախային քերականական երևույթները ներկայացնող բառաձևերը, նշանակությունները և գործառույթները: Դրա հետ մեկտեղ, կարևորվում են սոցիալական իրադրության, միջավայրի մասին գիտելիքները:

Գործաբանական մակարդակում կարևորվում է «խոսողի վարքագիծը», որը հնարավոր է ներկայացնել ռեգիստր-ռճական վերլուծությամբ, քանի որ ամեն մի անձի որոշակի քերականական կառույցների օգտագործումը բնորոշ է որոշակի խոսքային վարքագծի [4]:

Խոսութային մակարդակում քերականական նվազագույնի ընտրությունը ենթադրում է հաշվի առնել ոչ միայն խոսքային, այլև ոչ խոսքային արտահայտչամիջոցները, ինչպես նաև հաղորդակցվողների վարքագծի նորմերը:

Հաղորդակցական կոմպետենցիայի զարգացման նպատակներով քերականական նվազագույնի ընտրությունը ենթադրում է խոսքի սահունության առաջնահերթություն: Այն գործառական և բովանդակային ուղղվածություն է ստանում հաղորդակցական դիրքորոշումների տեսակյունից: Լեզվի տիրապետման բարձր մակարդակներում հնարավորություն է ընձեռնվում լեզուն ուսումնասիրել՝ ներառելով խոսակցական քերականական կառույցներ ըստ կոնկրետ իրական խոսքային իրադրությունների:

Ինչ վերաբերում է քերականական ձևերի, կառույցների կիրառման ճշգրտությանը, ապա այն հնարավոր չէ լուծել միանշանակորեն, քանի որ օտար լեզուների ֆակուլտետի ուսանողները որպես ապագա ուսուցիչներ կամ թարգմանիչներ պետք է հստակ պատկերացում ունենան թե՛ նորմատիվ, թե՛ իրադրային քերականությունների մասին:

Քերականության նվազագույնի երկու՝ արտադրողական(ակտիվ) և ընկալողական(պասիվ) տեսակները հաշվի առնելով կարող ենք պնդել, որ օտար լեզուների ֆակուլտետում զուգահեռաբար զարգացնում են նշված երկու տեսակը: Արդյունավետ է հատկապես արտադրողական քերականության ընտրության Ի.Վ. Ռախմանովի կողմից մշակված սկզբունքը, քանի որ ըստ այդ սկզբունքի՝ քերականական նվազագույնը ներառում է բանավոր խոսքում ավելի շատ տարածված քերականական կառույցները [8]:

Ինչպես նշվեց վերևում, քերականական նվազագույնի ընտրության առաջին սկզբունքը կիրառման հաճախականությունն է: Այն լինում է բացարձակ և հարաբերական: Իրադրային քերականության ուսուցման համատեքստում կարող է կիրառվել հարաբերական հաճախականության սկզբունքը, քանի որ այդ դեպքում ներկայացվում են ոչ թե քերականական կառույցի կիրառման բոլոր հնարավոր դեպքերը, այլև առանձին վերցրած իրադրությունները:

Իրադրային քերականության ուսուցման համատեքստում քերականական կառույցների ներմուծման քանակական մոտեցումը մղվում է հետին պլան, քանի որ նորմատիվ քերականական շատ կառույցներ հազվադեպ են գործածվում ժամանակակից՝ մասնավորապես խոսակցական անցլերենում: Ակնհայտ է, որ քերականորեն ազատ հաղորդակցումը հեշտանում է, և խոսքն ավելի սահուն է ստացվում, երբ կիրառվում են իրադրային քերականական կառույցներ:

Քերականական նվազագույնի ընտրությունն իրականացնելիս անհրաժեշտ է ներդնել ուսուցման հաղորդակցական-ճանաչողական ռազմավարությունը, հաշվի առնելով առարկայական և գործունային կոմպետենցիայի համամասնությունը, քանի որ

առարկայական կոմպետենցիան գնահատվում է քանակապես, իսկ գործունային և զարգացնող կոմպետենցիան՝ որակապես:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աստվածատրյան Մ. Գ. Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա, Երևան, Լույս, 1985, 392 էջ:
2. Լեզուների իմացության/իրազեկության համաեվրոպական համակարգ. ուսումնառություն, դասավանդում, գնահատում, Ե., Նորք գրատուն, 2005, 293 էջ:
3. Берман И. М. Грамматика английского языка : Курс для самообразования. - М.: Высшая школа. - 1994 . - 288 с.
4. Маслыко Е.А. и др. Настольная книга преподавателя иностранного языка: - Минск.: Вышэйшая школа. - 2004, - 522 с.
5. Мильруд Р. П. Компетентность в изучении языка // Иностранные языки в школе. - 2004. - № 7 . - С. 31-42.
6. Пассов Е.И., Киберева Л.В., Колларова Э. Концепция коммуникативного иноязычного образования. - Санкт-Петербург: Златоуст. - 2007. - 199с.
7. Поляков О. Г. Профильно-ориентированное обучение английскому языку// Иностранные языки в школе. - 2004. - № 2. - С. 6-11.
8. Рахманов И. В. Обучение устной речи на иностранном языке: учеб. пособие. М.: Высшая школа. - 1980. - 120 с.
9. Beaugrande, Robert de. "Register in discourse studies: A concept in search of a theory." In Mohsen Ghadessy, 1993, pp. 7-25.
10. Eggins S. An Introduction to Systemic Functional Linguistics. London: Pinter Publishers. 1994. - p. 230-256.
11. Leckie-Tarry, Helen. "The specification of a text: Register, genre and language teaching." In Mohsen Ghadessy, 1993, pp.26-42.
12. Marco, Josep. "Register analysis in literary translation: A function approach," *Babel*, 2001, 46.1:1-19.
13. Trudgill P. Introducing language and society London: Penguin English, 1992, 79 p.
14. [https://en.wikipedia.org/wiki/Register_\(sociolinguistics\)](https://en.wikipedia.org/wiki/Register_(sociolinguistics))

РЕЗЮМЕ
ПРИНЦИПЫ ОТБОРА МИНИМАЛЬНОЙ ГРАММАТИКИ В КОНТЕКСТЕ ОБУЧЕНИЯ
СИТУАТИВНОЙ ГРАММАТИКЕ
С. Х. БАГДАСАРЯН

В статье представляются изменения в требованиях к отбору минимальной грамматики и излагаются приоритеты целей преподавания грамматики на разных этапах овладения иностранным языком. В рамках компетентностного подхода, проблема рассматривается с точки зрения лингвистической, социо-культурной, коммуникативной, прагматической, культурной, металингвистической, методологической и грамматической компетенций. Принципы отбора минимальной грамматики представляют значительный интерес с точки зрения анализа регистров. В контексте обучения ситуативной грамматике, проблему отбора грамматического минимума следует рассматривать с прагматической точки зрения, где идея функциональности является важнейшей.

SUMMARY
PRINCIPLES OF SELECTING MINIMAL GRAMMAR IN THE SITUATIONAL GRAMMAR
TEACHING CONTEXT
S.KH. BAGHDASARYAN

The article argues the changes in the requirements to minimal grammar and states the priorities of grammar teaching goals in different stages of foreign language acquisition. Within the framework of competency-based approach the problem is viewed from the perspectives of linguistic, socio-cultural, communicative, pragmatic, cultural, meta-linguistic, methodological and grammatical competences. The selection of the principles of minimal grammar is of considerable interest from the point of view of register analysis. In the situational grammar teaching context the problem deals with pragmatics where the idea of functionality comes first.